

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ԲԱՍՑԵ՛ ք.ԿԱՊԱՆ, ՇԱԲԱՏՅԱՆ 20/32
2003 ԹՎԱԿԱՆՈՒՄ՝ (0285) 5 25 63
ՎԿԵՆՏՐԵՐԻ ԿԻՑ
(091) 45 90 47
(077) 06 28 02

ԳԻՄՆԱԴՐԻ ԵՎ ԳՐԱՏՈՐՎԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ԱՐԲԱՆԱԹՎ
ՊԱՏԱՆԱՄԱՅԻՄՈՑՄԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ
000231: Թերթը տպագրվում է
«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Դասցեն՝ ք. Երեւան,

Արշակունյաց 2: Ծավալը՝
2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2100, գինը՝
200 դրամ: Ստորագրված է
տպագրության 13.08.2014թ.:

ՈՒՐԲԱԹ
15 ՕԳՈՍՏՈՍԻ
2014Թ
№ 19 (327)

**Քո երեսի
ֆրիմով ուսես
հացդ մինչեւ հող
դառնալդ...**

ԾՆՆԴՈՑ, 3, 19

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am



ԳՐԱՅԵՐԻՆԻ Գ. ՍՈՒԿՈՒՄՅԱՆ

Խոսք նանադարիի

ՆԻԼ ՍՏԻՎԵՆՍՈՆ.
**«Մեզ համար
ամենամեծ արժեքը
մարդիկ են՝
մեր աշխատողները...»**

«Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Նիլ Ստիվենսոնը դեռես չի հասցրել ներկայանալ հանրությանն ու պատմել իր եւ իր գլխավորած թիմի առաքելության մասին, քանզի, ինչպես ինքն է նշում, առաջին իսկ օրվանից զբաղված է եղել ձեռնարկությանը, քաղաքին ու հարակից համայնքներին, ընկերության ենթակառուցվածքներին ու հանքագործների աշխատայանաներին ծանոթանալով:
«Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ նոր ղեկավարի հետ այս գրույցը նրան եւ ընկերության զարգացման վերաբերյալ նոր տեսլականը ներկայացնելու խնդիր ունի:
Ջրույցի սկզբում «Այունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը խմբագրակազմի անունից ողջունեց նորանշանակ գլխավոր տնօրենին՝ «Ջանգեզուրի ՊՄԿ»

ՆԻԼ ՍՏԻՎԵՆՍՈՆ
**«Ջանգեզուրի
պղնձամուլիբդենային
կոմբինատ» ՓԲ
ընկերության
գլխավոր
տնօրեն**

ՓԲ ընկերության կառավարումը ստանձնելու կապակցությամբ եւ մադթեց հաջողություններ: Նա միաժամանակ հայտնեց մարզային թերթի աջակցության եւ համա-
ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 2

Գնահատություն

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «Այսօր էլ Քաջարան քաղաքը հանդիսանում է մեր հանրապետության ամենաբարեկեցիկ քաղաքներից մեկը...»



ԼՍԽԱՎԱՐԸՆ ԿՈՒՐԲԱԹ

Մոտ մեկ տարի առաջ՝ 2013թ. սեպտեմբերի 26-ին, Նայասանի Նանրադեղության նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց Քաջարան՝ համայնքին ֆաղափ կարգավիճակ սալու 55-ամյակին նվիրված տոնակատարությանը մասնակցելու համար: Նա ելույթ է ունեցել ֆաղափ կենտրոնական հրադարակում հավաքված ֆաջարանցիների և տոնակատարությանը մասնակցող հյուրերի առջև: Սերժ Սարգսյանը մասնավորապես ասել է.

«Մենք հիմնավոր ժողովուրդ ենք, ունենք հազարամյա քաղաքներ և հաղթահարելով պատմության փորձությունները՝ հասել ենք 21-րդ դար: Շատ հաճախ հարց է առաջանում՝ ինչի՞ շնորհիվ մենք կարողացանք հասնել այսօրվան, և պատասխաններից մեկը հետեյալն է, սիրելի՛ քաջարանցիներ, որ ունենալով հզոր պատմական անցյալ, մեր ժողովրդի, մեր հասարակության լավագույն մասը միշտ նայում է ապագային: Եվ ահա այդպիսի դրսևորումներից մեկը Քաջարանի կոմբինատի ստեղծումն է և Քաջարան քաղաքի հիմնադրումը, ու փա՛ռք Աստծո, որ այսօր էլ Քաջարան քաղաքը հանդիսանում է մեր հանրապետության ամենաբարեկեցիկ քաղաքներից մեկը, իսկ Քաջարանի կոմբինատը՝ մեր տնտեսության հսկան»:



Խոսքի ճանադարհի

ՆԻԼ ՍՏԻՎԵՆՍՈՆ. «Մեզ համար ամենամեծ արժեքը մարդիկ են՝ մեր աշխատողները...»

ՍԿԻՋԲԸ ԷՋ 1

գործակցության պատրաստակամությունը՝ հանուն մեր երկրամասի հետագա զարգացման ու բարգավաճման:

– Պարո՛ն Ստիվենսոն, Ձեր կենսագրությանը ծանոթանալով՝ տեղեկանում ենք, որ բավականին փորձ ունեք հանրապետության բարեկեցության ոլորտում: Հիմա էլ, միջազգային մրցույթի արդյունքում,

ընտրվել ու նշանակվել եք մեր հանրապետության ամենախոշոր ընկերություններից մեկի՝ «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն: Եվ Ձեր պարտականությունները ստանձնել եք՝ այստեղ գալով նոր ղեկավար անձնակազմով: Ո՞րն է Ձեր և Ձեր գլխավորած թիմի հիմնական առաքելությունը Քաջարանում:
– Մեր հիմնական առաքելությունն է կառավարել այս ձեռնարկությունն այնպես,

որ այն առավելագույն բարիք բերի առաջին հերթին մեր ընկերության աշխատողներին, ապա և համայնքին ու ամբողջ հանրապետությանը:
– Անցած կարճ ժամանակահատվածում ի՞նչ տպավորություններ եք հասցրել ստանալ ձեռնարկությունից, համայնքից ու նրա բնակիչներից:
– Նշեմ, որ մինչ այս նշանակումը երեք տարի՝ 1998-2001թթ., աշխատել եմ Հայաստանում: Այնպես որ որոշ չափով այստեղ աշխատելու փորձ ունեմ և ծանոթ եմ երկրին: Երբ Հայաստանի Հանրապետությունում կրկին աշխատելու հնարավորություն առաջացավ, միանգամից համաձայնեցի, որովհետև Հայաստանն արդեն գիտեի: Սակայն նախորդ անգամ չէի եղել հանրապետության հարավում. այստեղ բնությունն իրոք հիասքանչ է, և հույս ունեմ՝ հնարավորություն կունենամ այս կողմերում նույնպես շրջել ու ավելի մանրամասն ճանաչել երկիրը:

Դրանով հանդերձ՝ ուզում եմ շեշտել՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենայինում մեզ համար ամենամեծ արժեքը մարդիկ են՝ մեր աշխատողները...
Աշխատել եմ Ղազախստանում, Տաջիկստանում, Բելառուսում, եղել հարեւան երկրներում, այնպես որ ծանոթ եմ նաև տարածաշրջանի երկրներին ու մարդկանց հոգեկերտվածքին: Եվ կարող եմ ասել՝ հայերն առավել առատաձեռն ու չափազանց հյուրասեր են:
– Որքանով տեղյակ ենք, հասցրել եք ծանոթանալ ձեռնարկության աշխատանքներին: Եվ դրանից հետո ի՞նչ խնդիրներ եք դրել Ձեր առջև, որ առաջնահերթ լուծում են պահանջում:
– Որոշ երեւույթներ տեսնելուց, առանձին իրողություններ ուսումնասիրելուց հետո շատ եմ զարմացել. աշխատանքային պայմանները գոհացնող չեն: Ձեռնարկությունն այնքան շատ ներդրումներ է կատարել համայն-





ԼՍԻՍԱՊՈՐ Գ. ՍԱԲԻՆՅԱՆ

ՎԱՅԵ ՀԱԿՈՒՅԱՆ. «Սոցիալական ծրագրերը լինելու են հասցեական ու մշակված ռազմավարության շրջանակում»

«Այունյաց երկիր» հարցերին պատասխանում է
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ
ընկերության վարչական տնօրեն Վահե Հակոբյանը

Ս.թ. հուլիսի 1-ից «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության կառավարման համակարգում կատարվել են փոփոխություններ: Կառավարման նոր համակարգում այսուհետ գործելու է ընկերության վարչական տնօրենի պաշտոնը: Այդ պաշտոնում նշանակվել է Վահե Հակոբյանը: Պարոն Հակոբյանի հետ առաջին հանդիպմանը ցանկացանք, նախենառաջ, պարզել Քաջարանի կոմբինատի շուրջ որոշ փարակույսների և ասեկոսների հիմնավորվածությունը, ինչպես է նոր ղեկավարության պարկերացումները սոցիալական ու կարգապահական մի շարք հարցերի վերաբերյալ:

– Պարոն Հակոբյան, հանրապետական մամուլում լուրեր շրջանառվեցին, թե իբր Նիլ Ստիվենսոնի նշանակումից հետո 400 աշխատակից հեռացվել է աշխատանքից: Արդյո՞ք իրականությանը համապատասխանում է այդ տեղեկատվությունը: Եվ ընդհանրապես նոր ղեկավարությունը մտադրություն ունի՞ աշխատատեղեր կրճատել:

– Նման քաղաքականությունը՝ մարդ կրճատելու գործելակերպը, խորթ է մեր բաժնետերերին: Միայն երկրորդ եռամսյակում ընկերություն մոտ 70 մարդ է աշխատանքի ընդունվել: Ընդհակառակը, ջանում ենք այնպիսի պայմաններ ստեղծել, որ աշխատողների եկամուտներն աճեն, նոր մարդիկ ներգրավվեն աշխատանքի մեջ և նոր հզորություններ ստեղծվեն: Մենք զբաղված ենք մեր ամենօրյա աշխատանքով, մարդ հեռացնելու մտադրություն բացարձակ չունենք. աշխատավոր մարդը մեր կոլեկտիվում իրեն լավ է զգում, իսկ ովքեր թերաճում են, փորձում ենք խորամուխ լինել պատճառների մեջ: Մենք հակված ենք մարդկանց գործելու հնարավորություն՝ ձգտելով յուրաքանչյուրի մեջ տեսնել լավը, և լավը կոմբինատում անհամեմատ շատ է: Մենք չենք պատրաստվում խեղճ ու նվաստացած մարդկանց հետ աշխատել: Անցած մեկ ամսում, եթե ինչորոշությունս չի

ղավաճանում, աշխատանքից ազատվել է յոթ հոգի (խոսքը հանքագործների մասին է)՝ կամ բնակության վայրը փոխելու, կամ աշխատանքի բնույթը փոխելու պատճառով: Մեզ համար պարզ չէ, թե որտեղից է ծնվել և ով է տարածում 400 մարդ կրճատելու ասեկոսներ: Ընկերությունը մի բազմամարդ կոլեկտիվ է, 3300 մարդ է աշխատում, և բնական է՝ ո՞նց աշխատանքի են ընդունվում, ո՞նց աճում են, բայց աշխատատեղերի կրճատման մասին խոսակցություններն անհեթեթային են:

– Քաղաքի սոցիալական օբյեկտները կոմբինատի հաշվեկշիռի համայնքին հանձնելու խնդիրն ենք ուզում անդրադառնալ: Խոսքը կառավարության 2004թ. դեկտեմբերի 23-ի N 1813 որոշման մասին է: Այդ որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Թույլատրել «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը Քաջարան քաղաքում գտնվող մշակույթի պալատի, մարզահամալիրի, այդ թվում՝ Ֆուտբոլի դաշտի, N1 մանկապարտեզի գույքն անհատույց օտարել Քաջարան քաղաքային համայնքին»: Կառավարության այդ որոշումը չի կատարվել: Այնուհետև՝ 2010 թվականի մարտի 23-ին ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գեղորգյանի N45-Ս հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ խնդրո առարկան ուսումնասիրելու համար: Հարցն ուսումնասիրվել է, նորից ընկերությանը հանձնարարվել է կատարել կառավարության որոշումը: Այդ ամենից հետո էլ սոցիալական օբյեկտները չեն հանձնվել համայնքին: Տեղյա՞կ եք այդ ամենին:

– Երեկ (*հարցազրույցը կայացել է հուլիսի 31-ին*) Քաջարանի քաղաքապետի հետ այդ հարցը քննարկվել է: Որքան հիշում են, համայնքի ղեկավարը դեմ էր այդ հանձնմանը, քանի որ առեւտրային կապիտալիզմը դրանք պահպանելու համար: Բայց որեւէ խնդիր չկա, կարող ենք նույնիսկ տեղական հանրաքվե անցկացնել՝ իմանալու բնակչության կարծի-

քը: Միաժամանակ, կարծում եմ՝ այսպես ավելի ճիշտ է, որովհետեւ մեր ուշադրության կենտրոնում են սոցիալ-կրթական այդ օբյեկտները, որոնց ֆինանսավորումն ավտոմատ կերպով է կատարվում: Երկու օր առաջ էլ մարզադաշտում անցկացվեց կոմբինատի արտադրամասերի միջեւ ֆուտբոլի մրցաշարի եզրափակիչ փուլը: Ինձ համար շատ հաճելի մի երեւոյթ էր, մարդիկ կարծես տոնակատարության էին եկել: Թեպետ չեմ կարծում, որ եթե քաղաքին հանձնենք այդ օբյեկտները, նման միջոցառումներ չեն լինելու: Համեմայն դեպ, հակված ենք լսելու ժողովրդի կարծիքը, կատարելու նրա որոշումը:

– Բնապահպանական խնդիրների մասին կուզենայինք առաջիկայում հանգամանալից գրույց ունենալ ընկերության գլխավոր տնօրենի հետ: Բայց այսօր շտապում ենք մի հարցի պարզաբանում ստանալ: Վերջին մեկ տարում Գեղի ծորում և հատկապես նույնանուն գետի ջրից օգտվողների շրջանում լուրջ մտահոգություններ են առաջացել՝ կապված «Լեռ-Էքս» ՍՊԸ գործունեության հետ: Ի՞նչ կասեք այդ կապակցությամբ, և, առհասարակ, ի՞նչ կարգավիճակ ունի «Լեռ-Էքս»-ը Քաջարանի կոմբինատում:

– «Լեռ-Էքս»-ի արտադրությունը, բնապահպանական խնդիրների հետ կապված, ժամանակավորապես դադարեցվել է: Այս պահին ընկերությունը վնաս է կրում և բավականին շոշափելի: Այլընտրանք չկա, բանգի չենք կարող շրջակա միջավայրին, ինչպես նաեւ համայնքներին և առաջին հերթին մեր աշխատակիցներին որեւէ վնաս պատճառել՝ օգուտ ստանալու ակնկալիքով: Եղել ենք տեղում, այն ամենը, ինչ այնտեղ կատարվում էր, պարզապես անթույլատրելի է: «Լեռ-Էքս»-ի արտադրությունը դադարեցրել ենք, բայց ոչ մի հոգու չենք կրճատել, ֆաբրիկան կանգնեցրել ենք, բայց մարդկանց շարունակում ենք աշխատավարձ վճարել, իսկ «Լեռ-Էքս»-ում մոտ 400 մարդ է աշխատում: Ընկերության գլխավոր տնօրենն էլ կոմկրետ հանձնարարություն է տվել՝ այդ մարդկանց համար զբաղվածություն ապահովել, բայց ոչ մե-

կին չկրճատել:
– Որքանով տեղեկացանք, այս կարծ ժամանակահատվածում նաեւ հնարներ եք փնտրում ընկերության աշխատակիցների ակտիվ հանգիստը կազմակերպելու նպատակով:

– Իրականացնում ենք մի ծրագիր, որի շրջանակներում ընկերության լավագույն աշխատողներին և համեմատաբար սոցիալապես անապահով ընտանիքների անդամներին ուղարկում ենք Վրաստան հանգստանալու: 32 հոգուց բաղկացած առաջին խումբը մեկնել է, պատրաստվում է մեկնելու երկրորդը, հետո կլինի երրորդը: Նաեւ ասեմ, որ մեր աշխատակիցներն իջեանել են հինգաստղանի հյուրանոցում: Դա, իրոք, թանկ է նստում, բայց մենք չցանկացանք մեր աշխատողներին ցրել քաղաքով մեկ՝ ավելի էժան հյուրանոցներում տեղավորելով: Ի դեպ, այնպես ենք արել, որ նրանք մի լուսն անգամ չծախսեն: Բաթումը հանգստանալու համար էժան քաղաքներից չէ, մանավանդ բանվորի, հանքագործի համար: Ընդ որում՝ յուրաքանչյուրին երկու ուղեգիր ենք տրամադրել՝ իր և ընտանիքի մի անդամի համար: Սա ակցիա չէ, այլ պարբերական բնույթ է կրելու: Մեր սկզբունքն այս է՝ մարդը պիտի լավ հանգստանա, որ հետո լավ աշխատի: Ընկերության աշխատողը պիտի հաճույքով գա աշխատանքի և պատվով վերադառնա տուն: Մենք այն համոզման ենք, որ, ինչքան էլ մարդուն վարչական մեթոդներով ստիպես լավ աշխատել, ոչ մի արդյունքի չես հասնի: Մարդ պիտի ուզենա լավ աշխատել: Եվ դրան հասնելու համար տարբեր խթաններ կան: Իհարկե, ամենամեծն աշխատանքի վարձատրությունն է, բայց միակը չէ: Դու մարդու նկատմամբ վերաբերմունքն է, նորմալ աշխատատեղ, աշխատանքի, կենցաղի և ժամանցի նպաստավոր պայմաններ ստեղծելն է, այս ամենը մեր տեսադաշտում է:

Ընկերության գլխավոր տնօրենի աշխատասենյակում քննարկում է եղել Քաջարանի քաղաքապետի մասնակցությամբ: Քաղաքում սոցիալական ծրագրերի իրականացման ուղղությամբ մտքերի ՇՈՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 8



Կոմբինատի նոր ղեկավարության ուշադրության կենտրոնում է Քաջարան քաղաքի դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումը: Երեք հերթափոխով կազմակերպված ճամբարում հանգստացել է մոտ 900 երեխա, որոնց հանգստի կազմակերպման գործում ընդգրկվել է 280 աշխատող: Նրանք էլ ապահովել են ճամբարականների հեղաքրքիր առօրյան, ինչպես և սնունդը՝ օրական երկու անգամ: Մեկ հերթափոխի փութոլությունը ինը օր էր: Այդ նպատակով «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն հարկացրել է 34 մլն դրամ: Օգոստոսի 8-ին էլ, ընկերության հովանավորությամբ, Լեռնագործների քաղաքում մեկնարկել է ուսանողական փառատոնը, որը կավարտվի սեպտեմբերի 21-ին՝ քաղաքի օրը: Լուսանկարը փրամադրել է Քաջարանի քաղաքապետարանը:



Տեսարան բաց հանքից

Քաջարանի կոմբինատը՝ հանրապետության տնտեսության հսկան

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը Հայաստանի Հանրապետության խոշորագույն լեռնահանքային ձեռնարկությունն է:

Գործարկվել է 1951-52թթ., իսկ հիմնադրման աշխատանքները սկսվել են դեռևս 1940-41թթ., ժամանակավորապես դադարեցվել վրահաս պատերազմի պատճառով, վերսկսվել 1944-ին:

Քաջարանի հանքավայրը գրավում է մոտ 20-25 քառակուսի կմ տարածք: Հանքավայրի հանքաքարում հաշվվում են 70-ից ավելի միներալներ, որոնցից մոտ 40-ն առաջնային են:

Քաջարանի հանքավայրն աշխարհի խոշորագույն ութ հանքերից մեկն է: Այդտեղ է կենտրոնացված մոլիբդենի համաշխարհային հաշվարկված պաշարների մոտ 6, Հայաստանի պղնձի պաշարների մեծ մասը:

Հանքավայրում պղնձի ամենատարածված է գլխավոր արդյունաբերական միներալը խակոպիրիտն է: Հաջորդ ամենատարածված է գլխավոր միներալը մոլիբդենիտն է:

Հանքաքարը բաց հանքից տեղափոխվում է կոմբինատի ջարդման տեղամաս, որտեղ նախնական ջարդումից հետո մուտք է գործում հարստացուցիչ ֆաբրիկա, հզոր աղացներով ամբողջովին մանրացվում, ջրի հետ անցնում բարդ տեխնոլոգիական և քիմիական գործընթացներով: Վերջնականորեն ստացվում են պղնձի և մոլիբդենի խտանյութեր:

Հարստացուցիչ ֆաբրիկայի թափոնները 36կմ երկարության պոչուկատարի միջոցով տեղափոխվում են ամբարվում են «Արծվանիկ» պոչամբարում:

1990-ականների սկզբին անկում ապրեց նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմ-

բինատը: Կանոնավոր աշխատանքը վերականգնվեց 1994-ի գարնանը, եւ աստիճանաբար սկսեցին ավելանալ արտադրական հզորությունները:

2000 թվականից ձեռնարկության տնտեսական քաղաքականության մեջ մեծ դեր ու նշանակություն ձեռք բերեց ներհանրապետական կոոպերացիան: Հիմք դրվեց մոլիբդենի եռօքսիդի, պայթուցիկի, կրի եւ այլ նյութերի ու սարքավորումների արտադրությանը:

2004թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ կառավարության որոշմամբ կոմբինատը մասնավորեցվեց: Մասնավորեցման պայմանագրով բաժնետոմսերի հսկիչ փաթեթը (60 տոկոս) անցավ գերմանական «Քրոնիմետ» ընկերությանը, 15 տոկոսը՝ «Մաքուր երկաթ» գործարանին, 12.5-ական տոկոսը՝ «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» եւ «Զանգեզուր մայնինգ» ընկերություններին:

Թողարկվող արտադրատեսակները, ինչպես նշվեց, մոլիբդենի եւ պղնձի խտանյութերն են:

1960-ականներին կոմբինատում տարեկան մշակվում էր 5,100,000տ հանքաքար, 1990-2013 թվականներին՝ տարեկան մինչեւ 12,000,000տ հանքաքար:

Ըստ սեփականատեր խմբի մինչեւ 2020 թվականն ընդգրկող ներդրումային ծրագրի՝ հանքաքարի վերամշակման տարեկան ծավալը կհասնի 16-18 մլն տոննայի:

Քաջարանից խտանյութերի առաքումը, ինչպես եւ անհրաժեշտ հումքի ու նյութերի մատակարարումը կատարվում է ավտոմոբիլային տրանսպորտով:

Ընկերության աշխատողների թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ 3300 է:

**Պատրաստեց՝
ՆՈՒՐԲԱԹ ԴԱՎԹՅԱՆԸ**



«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հարստացուցիչ ֆաբրիկայի նորակառույց ինքնամանրացման տեղամասը

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության համայնապարկեր



136 փոննա բեռնափորողությամբ «Caterpillar 785C» մոդելի ինքնաթափող հանքաքար տեղափոխելիս: Այն կոմբինատում շահագործվում է 2009 թվականից: 2012 թվականից ձեռնարկությունն ունի այդ մակնիշի վեց ավտոինքնաթափ



13 խորանարդ մետր շերտի ծավալով «Caterpillar 993K» մոդելի անվային ապարբարձիչը կոմբինատում շահագործվում է 2009թ. դեկտեմբերից: 2012 թվականից ձեռնարկությունն ունի այդ մակնիշի երկու ապարբարձիչ: Իսկ 90 փոննա բեռնափորողությամբ «Caterpillar 777G» մոդելի ինքնաթափող՝ 2012թ. հուլիսից: Կոմբինատն ունի այդ մակնիշի երկու ավտոինքնաթափ:



«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հարստացուցիչ ֆաբրիկայի վերազինված ֆլուպացիոն բաժանմունքը

Նայրենի եզերք



Նայասանի
Նանրա-
դեղատեղանի
բարձրությանը
երկրորդ լեռնա-
գագաթի՝
Կաղոնջուղի
(3904մ) արելե-
ահայաց
ստորոհին
են փոկած
Քաջարան
բաղաբն ու
համանուն
հանգավայրը:

Դիրհորոշում եւ աշխատանք

ՎԱՐԵ ՀԱԿՈՒՅԱՆ. «Սոցիալական ծրագրերը լինելու են հասցեական ու մշակված ռազմավարության շրջանակում»

«Այունյաց երկրի» հարցերին պատասխանում է «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության վարչական տնօրեն Վահե Հակոբյանը

ՍԿԻՁԲԸ ԷՋ 5

փոխանակում է եղել՝ իրականացվող ծրագրերի շարունակական բնույթի, նոր ծրագրերի իրականացման եւ այլնի մասին: Կոմբինատի ղեկավարության համոզմամբ՝ Քաջարանը զարգացման մեծ ներուժ ունի, բարգավաճման ճանապարհին է եւ այդ ճանապարհով էլ առաջ է շարժվում:

– Մեկ ամիս է, ինչ կառավարում եք Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Անշուշտ, դա շատ կարճ ժամանակ է թեկուզ եւ մասնակի ամփոփումներ, եզրահանգումներ անելու համար: Այդ բոլորով հանդերձ՝ կարո՞ղ եք արդեն իսկ արձանագրել կատարված ինչ-ինչ կոնկրետ աշխատանքներ, կարգավորած ոլորտներ, լուծված հարցեր:

– Ամենաշրջափելի արդյունքն այն է, որ անվտանգության նորաստեղծ ծառայության օպերատիվ աշխատանքի շնորհիվ հայտնաբերվել է կոմբինատից դիզվառելիքի պայթյունի դուրսհանման մեխանիզմը: Բաց հանքից երեք խողովակով վառելիքը հասնում էր Քաջարան: Անսական մոտ 300 տոննա դիզվառելիք էր անհետանում ձեռնարկությունից: Ամեն ամիս ձեռնարկությունը 300-400 հազար դոլարի վնաս էր կրում դրա հետեւանքով: Ընթացում է քննություն, իրավապահ մարմինները կպարզեն՝ ո՞ր էր գնում դիզվառելիքը, ո՞վ էր յուրացնում, ո՞վքեր են կանգնած այս ամենի հետեւում:

– Մի ստահոգության մասին ենք ցանկանում խոսել. որքանով տեղյակ ենք, 200-ից ավելի թոշակառու է աշխատում կոմբինատում: Նրանց հետ ունեցած

աշխատանքային պայմանագրերի հարցում բավականին անորոշություններ են առաջացել դեռեւս ամիսներ առաջ: Բայց խնդիրը չէր կարգավորվել: Ինչպե՞ս եք վարվելու կենսաթոշակառուների հետ:

– Մեկ անգամ հուլիսից երկարաձգել ենք թոշակառուների պայմանագրերը: Ով ցանկություն ունի աշխատել, ընդառաջում ենք: 74 տարեկան կենսաթոշակառու ունենք, ցանկություն առաջացավ հանդիպել այդ մարդուն: Հաճելիորեն զարմացա՝ տեսնելով նրա առույգ տեսքը, կեցվածքը: Ասաց՝ մեջք եռում է արյունը, ասացի խնդրեմ՝ շարունակեք աշխատել: Վեց ամսից մեկ տարի ժամկետով երկարաձգել ենք թոշակառուների պայմանագրերը:

– Շատ հետաքրքիր է, ի՞նչ սկզբունքով է կատարվում կադրերի ընտրությունն ընկերությունում:

– Բանաձեւ կա, որ ոչ մի տեղ ամրագրված չէ: Նախ պետք է մասնագետ լինել, անպայման հաշվի ենք առնում ընտանիքի սոցիալական վիճակը, եւ դիմողը պահանջված պիտի լինի կոմբինատի համար:

– Լուրեր կան, թե իբր ընկերությունում մոտ 50 տոկոսով կրճատվելու են սոցիալական աջակցության ծրագրերը: Եթե նույնիսկ իրական լինի այդ ասելուստեւ, ապա դա արտառոտ երեւոյթ չենք համարի, քանզի եղել են ժամանակներ, երբ կոմբինատի ղեկավարությունը վետո է դրել ոչ միայն մարզում, այլ Քաջարան քաղաքում իրականացվող այս կամ այն ծրագրերի վրա: Այդուհանդերձ՝ որքանով են հիմնավոր այդ խոսակցությունները:

– Սոցիալական ծրագրերը ոչ թե կրճատվելու են, այլ եւ շատանալու են: Գումարները նպատակային են ծախսվելու: Ծրագրերը լինելու են նպատակային, կոնկրետ հասցե ունեցող, մշակված ռազմավարության շրջանակում: Գուցե որոշ ծրագրերի առաջին քայլերն ավելի մեծ փող պահանջեն, բայց գումար ներդնելուց չենք հրաժարվելու:

– Մի հարց եւս հուզում է սյունեցուն... Կարո՞ղ են մարդիկ հույս ունենալ, որ դպրոցականների համար ժամանակին կառուցված ու երկար տարիներ գործած, բայց վերջին տարիներին փակված ու անհասկանալի նպատակի ծառայեցված հանգստի ծամբարն ու պրոֆիլակտորիումը գոնե գալիք տարվանից կծառայեցվեն մեր երեխաներին ու երիտասարդությանը:

– Մենք այսօր պլանավորել էինք պարուն Ամբարյանի, ֆինանսական տնօրեն Աննա Սեդրակյանի հետ գնալ այդ ծամբար, որպեսզի գնահատեինք եւ ճշտեինք, թե ինչ միջոցներ կպահանջվեն մանկապատանեկան ծամբարը վերագործարկելու համար: Մեր մտակալ ծրագրի մեջ դա ներառված է: Կոմբինատի հովանավորությամբ այս տարի Քաջարանում գործեց բակային ծամբար: Բայց դպրոցականների ամառային հանգստի այդ ծամբարը մենք պիտի վերաբացենք, չեն կարող կոնկրետ ժամկետ մշել. նախ՝ շինարարները պետք է ուսումնասիրություն կատարեն եւ տան իրենց եզրակացությունը:

– Եվ վերջին հարցը. կա՞նք քաղաքացիների ընդունելության սահմանված ժամեր, եւ մարդիկ առավելապես ի՞նչ հարցերով են դիմում Ձեզ: Մենք տեղյակ ենք, որ ընկերության նոր ղեկավարության հետ հանդիպելը խնդիր չէ, ինչը նույնպես արժանացել է հանրության դրական գնահատականին:

– Մեր դռները բոլորի առջեւ բաց են, քաղաքացիների ընդունելության սահմանված ժամեր չկան, ժամը իննին սկսվում է աշխատանքը, եւ այդ ժամից մարդիկ իրենց հուզող հարցերով կարող են դիմել մեզ: Պատահել է օր, երբ մոտ 300 հոգի են ընդունել: Հիմնականում դիմում են աշխատանքի ընդունվելու խնդրանքով: Քալիս են ամենատարբեր վայրերից, նույնիսկ՝ Երեւանից: Բայց խնդիրներ են ծագում, որովհետեւ ոմանք ոչ մի մասնագիտության չեն տիրապետում, նույնիսկ միջնակարգ կրթություն չունեն: Նաեւ օրինաչափություն է նկատվում. բոլոր կանայք ցանկանում են քիմիաբորատորիայում աշխատել, տղամարդիկ «Բելազ» են ցանկանում վարել: Ի դեպ ասեմ Քաջարանից չորս ուսանող ենք ուղարկել սովորելու կոմբինատի հաշվին՝ հետագայում մեր ընկերությունում աշխատելու համար:

Հարցազրույցը՝
ՎԱՐԲԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԳՐՎԻԾ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՏՈՂ»՝ ՍԱՀՄԱՆԱԾԱԿ
ՊԱՏԱՍԿԱՆԱՍՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32.
Փոստային՝ (0285) 5 25 63,
Հեռախոս՝ (091) 45 90 47,
(077) 06 28 02:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում
եւ հեղինակներին չեն վերադարձվում:
Խմբագրության եւ հեղինակների կարծիքները
կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում
(3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՐՎԱԶԳՐ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն
տպագրվող նյութերի համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում: Հղումը
«Այունյաց երկրին» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային
նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Ս 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպագրանակը՝ 2100, գինը՝ 200 դրամ:
Ստորագրված է տպագրության 13.08.2014թ.: